ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ

Տնօրեն՝ Ա. Կյուրեղյան

«31» օգոստոսի 2022թ. 2022-2023

Դասղեկի աշխատանքային

տարեկան ծրագիր

Լոռու մարզ

Շենավանի հիմնական դպրոց

VI դասարան

Քրիստինե Օհանյան

« 2022-2023» ուսումնական տարի

ԿՐԹԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1.**ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ(դասարանի ընդհանուր բնութագիրը)** *Դասարանը բաղկացած է 5 հոգուց: Առաջադիմությունը բավարար է,կարգապահական խնդիրները՝լուծելի:Դժվար դաստիարակվող աշակերտներ չկան,միջանձնային խնդիրները ծնողների հետ համատեղ աշխատանքի արդյունքում լուծելի են:*

2. **Ուսումնա-դաստիարակչական նախատեսվող աշխատանքները ուստարվա ընթացքում**

Ուսումնա-դաստիարակչական նպատակով պետք է հաճախակի հետևել դասարանի վարքին և ուսման առաջադիմությանը,կանխել անհարգելի բացակայությունները,ուշացումները: Հրավիրել ծնողական ժողովներ, որոնք կնպաստեն աշակերտների ակտիվության բարձրացմանը: Դասից և վարքից անբավարար աշակերտների հետ աշխատել առանձին , ուսման որակը բարձրացնելու նպատակով;Աշակերտների մոտ ձևավորել բազմաբնույթ կարողություններ (կարգապահություն, մաքրություն, անձնական հիգիենայի, համագործակցություն, փոխօգնություն) :Հետաքրքրություն և սեր ձևավորել գրքի,ընթերցանության նկատմամբ:Դիմացինի հանդեպ լինել հանդուրժող,պատասխանատու:

3. ՀԱՅԵՑԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

3.1 **Հոգևոր դաստիարակություն** Ձևավորել արժեքային համակարգ,սերմանել հարգանք,սեր հայոց եկեղեցու նկատմամբ,ծանոթացնել հոգևոր կենտրոնին՝ Էջմիածնին *Այս նպատակով կազմակերպել էքսկուրսիա դեպի մոտակա հոգևոր մշակութային կենտրոններ: Աշակերտների մոտ սերմանել սեր և հարգանք քրիստոնեության նկատմամբ:*

3.2 Գեղագիտական դաստիարակություն Ձևավորել գեղեցիկը տեսնելու *,ընկալելու կարողություն;Կազմակերպել տեսաֆիլմերի դիտում:Ֆիլմերի միջոցով ցուցադրել և բացատրել թե գեղեցիկը ինչ դեր ունի ներկայիս կյանքում: Բացի այդ լսել աշակերտների կարծիքը այդ նյութի վերաբերյալ: Կյանքից բերել օրինակներ և ձևավորել գեղագիտական ճաշակ:*

3.3 Ռազմահայրենասիրական դաստիարակություն Դաստիարակել հայրենասիրական ոգով,բարձրացնել ազգային-հայրենասիրական ոգին:Ծանոթացնել պետական խորհրդանիշների ն,բանակինպատմությանը,ազգային գործիչների օրինակով ձևավորել ապագա հայ զինվորի ,հայրենիքի հանդեպ պատասխանատու քաղաքացի:

3.4 Ֆիզիկական դաստիարակություն *-Բացատրել և պահանջել , որ աշակերտները հետևեն իրենց ֆիզպատրաստությանը: Կոփեն իրենց մարմինները ֆիզվարժությունների և հնարների միջոցով: Կարևորեն ինքնախնամքի դերը:*

3.5 Աշխատանքային դաստիարակություն *Աշակերտների մոտ ձևավորել սեր դեպի աշխատանքը և աշխատավոր մարդը: Սովորեցնել,որ չկան լավ կամ վատ մասնագիտություններ,աշխատանքներ:Ձևավորել հարգանք աշխատանքի և արդյունքի հանդեպ:*

3.6 Բնապահպանական դաստիարակություն *Կարևորել մարդ-բնություն փոխհարաբերությունները,արժևորել բնությունը մեր ժամանակներում:Ձևավորել հարգանք շրջակա միջավայրի,Երկիր մոլորակի նկատմամամբ:*

4. Դպրոց-ընտանիք կապը *Երեխաները պետք է հասկանան, որ ընտանիքը հանդիսանում է պետության կորիզը: Հաճախ հրավիրել ծնողական ժողովներ,ակտիվ համագործակցել ծնողների հետ՝ներգրավելով միջոցառումներում:*

ՈՒՍՈՒՄՆԱ-ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՀԻՄՆԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Ուսումնական շաբաթներ	Ուսումնա-դաստիարակչական աշխատանքների բովանդակություն	Կատարողներ
I	Զրույց. Գիտելիքի օր	աշակերտ դասղեկ
II	Զրույց. Բարեկրթության կանոնները	դասղեկ
III	Զրույց. Անկախությունն արժեք է,երբ դու դրա տերն ես	աշակերտ դասղեկ
IV	Զրույց. Շնորհակալ ենք հերոս	աշակերտ դասղեկ
V	Քննարկում. Աշակերտների իրավունքներն ու պարտականությունները	դասղեկ
VI	Զրույց. Ուսուցիչ,իմաստության աղբյուր	աշակերտ դասղեկ
VII	Տեսանյութի դիտում նվիրված Թարգմանչաց տոնին	աշակերտ դասղեկ
VIII	Զրույց. Լավ և վատ սովորույթներ	աշակերտ դասղեկ
IX	Զրույց-քննարկում. Աշխատանքը ազնվացնում է մարդուն	աշակերտ դասղեկ
X	Զրույց. Իմ հետաքրքրություններն ու նախասիրությունները	աշակերտ դասղեկ
XI	Զրույց-քննարկում. Ինչ է ընկերությունը և բարեկամությունը	աշակերտ դասղեկ
XII	Զրույց. Ում կուզեի նմանվել	աշակերտ դասղեկ
XIII	Ֆիլմի դիտում –քննարկում. Փոքրիկը	աշակերտ դասղեկ
XIV	Զրույց. Հայտնի մարդկանց կյանքի պատմություններից	աշակերտ դասղեկ
XV	Զրույց. Հայկական ամանորի պատմությունից	աշակերտ դասղեկ
XVI	Զրույց. Ինչպիսին եմ ուզում լինել	աշակերտ
XVII	Տեսանյութի դիտում,քննարկում . Բանակը մեր ուժն է	աշակերտ դասղեկ
XVIII	Զրույց-քննարկում. Հանդուրժողականություն	աշակերտ դասղեկ
XIX	Զրույց.Պետական խորհրդանիշների մասին	դասղեկ
XX	Զրույց-քննարկում. Մայրենին ազգապահպանության գրավական	աշակերտ դասղեկ
XXI	Զրույց. Իմ սիրելի հեղինակը	աշակերտ դասղեկ
XXII	Զրույց. Իմ սիրած գիրքը	աշակերտ դասղեկ
XXIII	Ասմունք. Ողջույն,գարուն	աշակերտ

XXIV	Զրույց. Աշխարհը փոխած կանայք	դասղեկ
XXV	Զրույց. Ավանդույթներ	աշակերտ դասղեկ
XXVI	Զրույց. Եկեղեցական տոներ	աշակերտ դասղեկ
XXVII	Զրույց,ֆիլմի դիտում. Ժպիտը մարդու կյանքում	աշակերտ դասղեկ
XXVIII	Զրույց.Նրա մասին ,ով ամեն օր իմ կողքին է	աշակերտ դասղեկ
XXIX	Զրույց-քննարկում. Եթե ես կարողանայի,ինչը կփոխեի	աշակերտ դասղեկ
XXX	Զրույց. Հայոց մեծ ցավը	դասղեկ
XXXI	Զրույց. Մայիս,հաղթանակների ամիս	աշակերտ դասղեկ
XXXII	Զրույց-քննարկում .Ինչպիսին է ՀՀ քաղաքացին և ինչպիսին կուզեի տեսնել նրան	աշակերտ դասղեկ
XXXIII	Զրույց. Դպրոցական վերջին զանգ:Ինչ խորհուրդ ունի	աշակերտ դասղեկ
XXXIV	Քննարկում. Ինչ տվեց 2022-2023 ուս տարին	աշակերտ դասղեկ

ԴԱՍՂԵԿԻ ԴԱՍՏԻԱՐԱԿՉԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԹԵՄԱՏԻԿԱ

N	**Դասղեկի անցկացրած միջոցառման (դասախոսություն, զրույցներ, դիտողական արշավներ, էքսկուրսիաներ և այլն) բովանդակությունը**	**Կատարման ժամկետ**
1	Խոնարհում և ոգեկոչում,միջոցառում	սեպտեմբեր
2	Թարգմանչաց տոն,դաս- միջոցառում	հոկտեմբեր
3	Ոսկե աշուն,համադպրոցական միջոցառում	նոյեմբեր
4	Հայական ամանոր,դաս-միջոցառում	դեկտեմբեր
5	ֆիլմի դիտում Հայոց բանակ թեմայով	հունվար
6	Գիրքը մարդու՝ բարեկամ;Գիրք նվիրելու օր :Դաս- միջոցառում	փետրվար
7	Բարև,գարուն,դաս-միջոցառում	մարտ
8	Համադպրոցական շաբաթօրյակ	ապրիլ
9	Էքսկուրսիաներ,այցելություններ մշակութային կենտրոններ	Տարվա ընթացքում

Digitally signed by KYUREGHYAN ANAHIT 5101840181
Date: 2023.03.24 20:24:20 AMT